**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 2-րդ, 9-րդ փողոցների և 9-րդ փողոցի 1-ին նրբանցքի ճանապարհահատվածների ասֆալտապատման, մայթերի կառուցման և ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 7-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «Արհովշին» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «Արհովշին» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի ապրիլի 12-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/15 պայմանագրի.

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «12.04.2024թ.» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը խմբագրվել և ներկայացվել է նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «...պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը ներառյալ» բառերով, ինչպես նաև Պայմանագրի Հավելված թիվ 2-ի և 17.10.2024թ.-ին կնքված Համաձայնագիր 1-ի Հավելված N 1-ի «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը»-ի «Ավարտը» սյունակում նշված «Աշխատանքաների սկզբից 120 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել է «Աշխատանքաների սկզբից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը ներառյալ» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 3-ով, 17.10.2024թ. կնքված Համաձայնագիր 1-ի հավելված N 2-ով հաստատված վճարման ժամանակացույցները խմբագրվել և ներկայացվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ով ներկայացված տարվերակի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**